

ԲԱԺՆԵԳԻՆ

ԵԳԻՊՏՈՍ
Տարեկ. 50 Ղրշ
Վեցամս 25 "

ԱՐՏԱՍԱՀՄՆ
Տարեկ. 13 ֆր
Վեցամս. 7 "

Ամերիկա
2 Տղ. 30 սէնդ
ԿԱՆԻՍԻԿ
→←



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր
Ծանուցումներ
մասնաւոր պայ
մաններով:

→←

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Թիւր 1 Ղրշ. ողջ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Ը. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 5 ՀՐԵԳԵԱՐԹԻ 1904

ԹԻԻ 303

ԱԶԳԱՅԻՆ

ՍԱՍՈՒՆԻ ՎԻՃԱԿԸ

Կ. Պոլսէն կը հեռագրեն Վիեննայի ժրէրին:

«Դրութիւնը Սասունի մէջ անփոփոխ է: Հայ ապստամբապետ Անդրանիկ չուզեր բանակցել՝ անձնատուր ըլլալու և իր խումբերը ցրուելու մասին: Մուշի առաջնորդին միջնորդութեանը կ'սպասուի: Այս դրութիւնը գիւանադիտական շրջաններու ուշագրութիւնը կը գրգռէ: Անգլիոյ կողմէ պէտք եղած յորդորները տրուած են թուրք կառավարութեան: Նոյնը եղած է նաեւ ռուսիոյ և ֆրանսայի կողմէ: Բ. գուռը կը ջանայ հաւատացնել որ զինուորական ու քաղաքական իշխանութեանց խստիւ հրահանգ տրուած է առայժմ Անդրանիկի դէմ շարժում մը չընել, այլ արգելք ըլլալ քրդական յարձակումներուն ու հարստահարութիւններուն:

..

Քորէսթոնսանս Պիտրին ալ կը հեռագրեն:

«Պիթիւզի վայրին տուած տեղեկութեանց նայելով, Անդրանիկ այրեր է Գէնճ գաւառակի երեք փոքրիկ քրդական գիւղերը, որոնց բնակիչները մերժեցին անոր միանալ, բաց ասկից խումբերէն մէկը յարձակեր է Պիթիւզէն հինգ

մղոն հեռաւորութեամբ գտնուած գիւղի մը վերայ և 30 մահմետական սպաննած է:

Օրմանեան Պատրիարք նորէն հրահանգ ըստացաւ ելլողէն՝ Մուշի առաջնորդին միջնորդ հրաւիրել Անդրանիկը որ դադարեցնէ իր շարագործութիւնները:

—Կովկասի «Հայկական Ինքնապաշտպանութեան» Կեդր. Կոմիտէն՝ տեսնելով որ կը գրտնուին տակաւին ցածհոգի հայեր, որոնք ոտնակոխելով մեր ազգային պատիւն ու ժողովուրդի շահերը, կ'աշխատին զօրացնել մեղ ճնշող ռուսական բիրտ ուժը, վերջնապէս սրոյշեր է այսուհետեւ այդպիսիները խստիւ պատժել:

—Զէյթունի Տ. Կարապետ Եպիսկոպոսի վախճանած ըլլալը հեռագրուած է ի Պատրիարքարան:

—Մշոյ վանքերէն մէկուն մէջ ընծայարան մը պիտի հաստատուի և տեսչութիւնը պիտի յանձնուի Արմաշի միաբաններէն Մեսրոպ Վ. Նարոյեանի որ Մշեցի է:

—Ռէթէոս էֆ. Պէրպէրեան՝ իր վարժարանին մէջ ձրիաբար ընդունել է հանգուցեալ Մըկրտիչ Սարգիսեանի Դերենիկ անուն որդին:

—Նոր—Ձուգայի մէջ պիտի սկսի հրատարակուիլ Նոր—Ձուգայի Լրագրեր անունով ամսական թերթ մը :

—Ատիս Ապուպայի (Հապէշիտան) աղգայինք Լսարան-Ընթերցարան մը կազմակերպած ըլլալով, գիրքերու և պարբերական հրատարակութեանց համար 900 ֆր. հանգանակեր են :

—Բարիզի գրական համալսարանի նախկին աշակերտ Պ. Նաւարեան, որ ֆրանսական գրականութեամբ կ'ըստէր, նոյն կառավարութենէն ստացեր է Ակադեմիական ասպետի տիտղոս և շքանշան :

Երկուշաբթի օրը Գահիրէի Վառիէթէ թատրոնին մէջ տեղի ունեցեր է ծանուցեալ միութիւնը, երկու հազարէ աւելի ընդունութեան մը ներկայութեանը, նախագահութեամբ Ֆրանսացի երեսփոխան Պ. Թումանի : Շատ մը ճոռեր խօսուեր են ականաւոր անձանց կողմէ, հայերէն, ֆրանսերէն, անգլիերէն, իտալերէն և արաբերէն լեզուներով : Օրակարգ մը քուէարկուեր է, որով Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ և Միացեալ Նահանգներու միջամտութիւնը կը խընդրուի Հայկական նորանոր կոտորածներն արգիլելու համար :

Բոժ. —Իմ ջերմ խնդակցութիւնս՝ այս օրակարգը Ռուս բռնապետին չուղղուելուն համար :

Դիւան ընտրողական ժողովոյ ի Կանիւրէ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գաւառական ընդհանուր ժողովոյ պաշտօնավարութեան պայմանաժամը աւարտած ըլլալով, տարւոյս Մայիս 9/22ի կիրակի առաւօտ քուէարկութիւն պիտի կատարուի նոր ընտրութեան առթիւ :

Այդ ընտրութեան պիտի մասնակցին ըստ սահմանադրութեան, աղգային տուրք տուող մերազնեայք : Ընտրողական ժողովն ընտրական իրաւունքը կարելի եղածին չափ ընդարձակելու համար, որոշած է որ միայն մէկ տարեկան տուրք տուողներն ալ մասնակցին քուէարկութեան. ինչպէս յայտնի է տուրք տուողին կամքին ձգուած է վճարել ըստ իւր հաճոյս 25, 50, 75 շշ. ողջ կամ ալ աւելի :

Տուրք տալու վիճակ ունեցող Պատ. ազգայիններուն իւրաքանչիւրին այս առթիւ շրջա-

բերական զրկուած է, բայց այն աղգայիններն որ անունին առաջնորդարանի տուժարաց մէջ չըղձնուելուն համար, ստացած չեն այդ շրջաբերականէն, սակայն գիտեն թէ ընտրական իրաւունք կը վայելեն, այսինքն տուրք տուող տրամադիր, պատուատուր, Օսմանեան հպատակ, 25 տարին լրացուցած, բնիկ, կամ ընտանեօք երեք առանց ընտանիքի հինգ տարին ետէ ի վեր հաստատուած են յեղիպտոս : Կը հրաւիրուին մինչեւ 1904 Մայիս 8/21, շաբաթ երեկոյ, ամեն օր առտուան ժամը 9էն 12 եւ երեկոյեան ժամը 3ուկէն 5ուկէս. բաց ի կիրակի օրերէ. ներկայանալ առաջնորդարան. հաստատել ինքնութիւնին արձանագրել տալ անուննին. ստանալ յիշեալ շրջաբերականէն օրինակ մը. պաշտօնական ընկալագրի փոխարէն վճարել աղգային տուրքը և մասնակցիլ ընտրութեան :

Աղօթարար

Առաջնորդ

Եղիպտոսի հայոց

ՅՈՒՍԷՓ ԱՐԲ. ԱՅՎԱԶԵԱՆ

ՆՈՐ—ԴԱՐ ԿԱԹՆԱՐԱՆԸ ՎԵՐԱԲԱՅՈՒՄ Է
որու Տնօրէնն է համակրելին Տ. Յ. Ղազիկեան :

Անարատ կաթ և մաքուր սպասարկութիւն :
Դիմել Սարաֆիյէ՝ Շատր-Պաթըի փողոց թիւ 2 :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Պարկազ 31 մարտ 13 ապրիլ 1904

Յիւլիպէէն ստացած վերջին տեղեկութեանցըս համեմատ, Տիար Քիւրտեան և տրթ. Օրմանեան ստիպուեր են վերջապէս իւենց բարեկտմն մաքրակենցաղ(?) Տ. Տաճատը պաշտօնէ դադարեցնել. սակայն ցաւօք պիտի իմացնեմ Ձեզ թէ ինչպէս կ'երեւի, Ազդ. Պատրիարքարանը իր հրամանը վերոյիշեալ պարոններուն յարգել տալու համար Պուլիարաց Էկզարկի միջամտութեան գիմիւր հարկին մէջ դտնուեր է. այսպէս՝ այդ պարոնները որք բարեկարգիչի հովեր առած աւելն բանի մէջ կը մտնեն, իրենց այս անխորհուրդ քայլով պատճառ եղան որ օտար պաշտօնատանց առջեւ ալ այդ քահանային ամօթալի խնդիրը պարզուելով հայկերը վարկաբեկ ըլլայ :

Իսկ մեր Պարկազի պարոնիւնները, Թորիկ-

եան, Բրիտանի, Ա. Սիւնկիւնեան եւ ընդ. չբաշտակցան Պատրիարքարանը խաբելու համար վերջին ճիգ մը ընելու, հանրագրով թեան մը ձեռնարկած խաբեպատիր գողութեամբ մը, որով անճարակօրէն Ղերշակեանը չբժեղացնել կը շահալին և այս մարդիկը իրենք անձամբ տեսած էին խեղճ որբուհին, որ արտասուածքով կ'աղաղակէր թէ աւելի լաւ է զ'ենքը թրքաց ճամին ուղարկել քան նոյն քահանային տունը:

Մարդիկ կան կարծես որ իրենց սկզբունքը բաժնի գրկելու պաշտօնանել ինչ որ վատ ու դարչելի է և խաղառ հեռու կենալ ճշմարտութենէ ու աղնուութենէ:

ԻՐԱԶԵԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսո—Ճարտնական պատերազմը

Եալու գետին եղբրքը վերջապէս տեղի ունեցաւ առաջին մեծ ճակատամարտը ռուսերու և ճարտնականներու միջև: Այս եղական պղտիկները լողալով կանցնին Եալու գետը և անանկ կատաղութեամբ կը յարձակին հսկայ խաղախներուն վրայ, որ այս վերջինները սոսկալի կոտորած մը կրկնէ յետոյ՝ ամէն կէտի վրայ խոյս կուտան, թշնամիին թողալով 29 թնդանոթ, մեծաքանակ ռազմամթերք, 4000 գլխակ, երեք գնդապետ, ինը հրամանատար, 40 սպայ և 800 վիրաւոր: Երեք հարիւր ռուսեր գերի բռնուած են: Ճարտնականներուն կորուստն է 1100 զինուոր և սպայ:

—Ճարտնացիք գրտած են Նիւ—Շուսկ քաղաքը: Քաւրօթքին Չարին ուղղած իւր մէկ հեռագրին մէջ կըսէ թէ Ճարտնական թնդանոթները չափազանց հզօր են:

—Բորթ—արթիւրի չեզ անցըը գոցելու փորձ մըն ալ ըրած են ճարտնացիք. ութը փայտէ հին փոխադրանուեր՝ երկու թորփիլանուերու առաջնորդութեամբը Նեղուցին բերանը տարած են. ռուսական ամրութիւններէն արձակուած ռուսները ընկզմած են թէ փոխադրանուերը և թէ թորփիլները: Ճարտնական լուրերու նայելով, ճարտնացիք այս անգամ յաջողեր են անցըր գոցելու: Իսկ Ալէքսիէֆ կը ծանուցանէ թէ փորձը վիժած է, ինչպէս ասկէց առջինները:

—Ստոյգ. ազբիւրէ կը ծանուցուի թէ ճարտնական կառավարութիւնը հինգ հարիւր հազար անգլ. սոկիի փոխառութիւն մը պիտի կընքէ Անգլիայ մէջ, մաքրային հասոյթները երաշխաւորութիւն ցոյց տալով:

Հայ-Մակեդոնական միքիկ

Մարտ 12ին Լոնտոնի մէջ տեղի ունեցեր է մեծ մրթիկ մը ի նպատակ Հայաստանի և Մակեդոնիոյ: Միթիկին մասնակցած են շատ մը անգլիացի հայասէրներ, ի մէջ այլոց ճէյմս Պըրայս. Բազրիլէն Լոնտոն գացեր են Բրօ—արմէնիայի խմբագիր Բիլզ—Բիլառ և Վիկթօր Պէրար: Հայաստանի և Մակեդոնիոյ ներկայ անտանելի վիճակին վրայ բաւական ատենախօսութիւններ ըլլալէ վերջ՝ որոշուեր է իմացնել Եւրոպական տէրութեանց (բաց ի Ռուսիայէ) թէ թրքական յոսի վարչութեան շարունակութիւնը անպատուութիւն է Եւրոպայի համար, և թէ պէտք է վերջ դնել տալ թրքական գաղանթութեանց:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ “ԲԱՆԱՍԷՐՈՒ”

«Մեր պատուական ընթերցողներն անշուշտ կ'սպասէին որ Արի մէջ մեր կատարած ուսումնասիրութեան և մասնաւոր պիլոսֆիերու մասին տեղեկութիւններ տալինք Բանասէրի մէջ: Իրաւունք ունին այսպիսի պահանջքի մը: Բայց պանդաւն նկատուեցաւ, որոնց վրայ չենք ուղեր գրել ախտեղ, այն պահանջուած տեղեկութիւնները պիտի հրատարակուին ՀԱՅՏԱՐԱՐԻ մէջ, որու Ա. հատորը պիտի կազմէ Արի: Իսկ «Բանասէր»ի բաժանորդները Մայիս ամսուն մէջ իւր Առիւր պիտի ստանան Արիի մասին գրուած և պատկերներով ծոխացած փառակազմ գրքի մը:

Կարելոր է ծանուցանել մեր բաժանորդներուն, թէ անոնք որ չեն վճարած իրենց բաժնեգինը, մեր նուէրը պիտի ստանան իրենց վճարուածէն յետոյ:

Կ. Բաւաւալեան

Մեր գրատան մէջ կը ծախուին նաև Բարիգէն նոր եկած հետեւեալ գիրքերը:

Փր. անգ.

Պատմ. ԺԹ. դարու հայ զպրութեան	5
Քաղկեդոնական ժողով և Հայ. եկեղեցի	2 50
Իրանի հերոսները հայ ժողովուրդի մէջ	1 30
Բաղդատական բերականութեան ծագումը	1
Ջան. Գիլլու միջնակարգ (600 տուն)	80
Օրուան մը մէջ լուսանկարիչ ըլլալ	50
Վերածնութիւն Հայաստանի, պատկերով	25

Նաև Բրօ. Արմէնիոյ խմբագրապետ Պ. Բիլզ—Բիլառի, ծանօթ հայասէր Ժօւէսի, Մէրի Տրդատայ և Անիաւերականներու պատկերներով բաւաւորութեան կը ծախուին 10 հատը 1 ֆրանքի:



ԴԵՂԱԳՈՐԾԻՆ

ՎՐԷԺԸ

—o—

(Ճամբորդի մը յուշատեղի)

Իզմիրի շրջակայ քաղաքներէ մէկուն մէջ գտնուած հասարակաց պարտէզին մէկ անկիւնը թատերաբեմ մը կար, ուր ամառը երբեմն ներկայացումներ կը տրուէր՝ քաղքէ քաղք պըտըտող գերասանական փոքրիկ խումբերու միջոցաւ:

Անցեալ տարի նոյն քաղաքն այցելող եւրոպացի երիտասարդ ճամբորդ ճամբորդ մը՝ պանդոկապետէն տեղեկանալով որ նորեկ գերասանական խումբ մը ներկայացումներ տալ ըսկսած է, գիշեր մը թատրոն կերթայ ու թեաթոն մը վրայ բազմելով, հետն ունեցած գիտակով՝ մերթ ընդ մերթ՝ անկիւն մը առանձինն նստող գեղանի կինը կը դիտէ:

Պարտէզին ու թատերաբեմին վարձակալը, որ նոյն կնոջ «իրահարն էր, կը նախանձի, կը զայրանայ ու դիտակաւ րին մօտենալով կ'իմացնէ որ եթէ անգամ մըն ալ դիտակը իր հոմանունէն կողմը դարձնէ, զինքը պարտէզէն դուրս պիտի վաճնէ:

Երիտասարդ օտարականը այս արտառուց առաջարկէն յանկարծակիի կուգայ ու մտածելով որ տեղւոյն օրէնքներուն ու սովորութեանց անտեղեկ է, ուստի խօսքը չերկարելու կամ լաւ եւս է ըսել փորձանքի մը չհանդիպելու համար խոհեմութիւն կը սեպէ չի պատասխանել, ու թատրոնէն կը մեկնի, ու խտելով սակայն քաղքէն չմեկնած թատրոնի վարձակալէն վրէժ լուծել:

Քանի մը օր վերջ՝ քաղաքին մէջ կիւսացուի թէ գերասանական խումբը երկու օրէն ճամբորդ ըլլալուն՝ որոշած է ուրբաթ գիշեր արտաքոյ կարգի շքեղ ներկայացում մը տալ ինը պատ պարտէզի վարձակալին:

Եւրոպացիին համար յարմար տեղիքը եկած էր վրէժը լուծելու, հետեւեալ կերպով.

Ներկայացման իրիկունը, մէկ ժամ առաջ, երբ երկու հանդիսականաց բազմութիւնը նոյն պարտէզին մէջ կը պտըտէր, Եւրոպացի պարոնը՝ վարձած չորս կառքերէն մէկին մէջ առանձինն բաղմամ էր, քովն ունենալով գեղեցիկ սալառ մը լեցուն հարսանեկան շաքար. իսկ Բ.

կառքին մէջ 4 նուագաժողներ, Գ. և Դ. ին մէջ ութը շանթեօզ նստեցուցած պարտէզ կը մտնէ, ուր քիչ մը դադար առնելէ վերջ՝ նուագաժողներուն կը հրամայէ վաղ մը զարնել, միևնոյն վայրկեանին շանթեօզներուն ալ հրամայելով նոյն եղանակաւ պարել:

Պարտէզն հաւաքուողները ասոնց չորս կողմը կտռնեն ու զիրար համշտկելով, վաղ մը դիտեն:

Տասը վայրկեանէն պարը ինչպէս և նուագարանք կը դադարին, ու պարոնը առի շնորհակալութիւն զիրենք շրջապատող բազմութեան կողմէն մէկ մէկ շաքար կը հանէ անոնց կուտայ, որոնց շնորհակալութիւնները ընդունելէ ետքը նուագաժողներուն մոտը մը զարնել կը հրամայէ ու իրեններովը պարտէզէն կը մեկնի:

Մէկ ժամէն թատերատեղւոյն վանդակագուռը բացուելով հանդիսականք կը հրաւիրուին տոմակ առնուլ, սակայն պարոնին հրամացած շաքարն ուտողներուն ամենքն ալ մեծ ու պըզտիկ՝ գէմքերնին այլակերպելով կ'սկսին փորերնին չփել, մեծ իրարանցումի մէջ կիլնան ու պարտէզէն դուրս կը նետուին, գոչելով:

— Եղբայր, աս ի՞նչ է, փորիս մէջ բան մը կըլլայ կոր:

— Իմ ալ,

— Հիմա պիտի փախցունեմ:

— Պէտքիչ կընեն կոր:

— Ճամբայ բացէք որ անցնիմ, փորիս մէջ դորդողոց ինիաւ:

— Մայրիդ, բան մը տըլլամ տոյ:

— Քուրուկ, աս ի՞նչ բան է, հաւաղարկ եղանք, ի՞նչ եղանք:

— Նէ՞ տէ՛մէք օլտուն. պու նէ՞ խողքութիւն չէյ աիր, աղբար, եօլ աչընըզ քի շու իհթիյար առամ կէչիին, քէնտիսինի թութամայօր:

— Անոնի է, զաւակս, ճամբայ տուէք, թող տալու վրայ եմ:

— Ծօ աղբար, ի՞նչ կըլլաք կոր, աս ի՞նչ բան թըռտը է:

— Ի՞նչ պիտի ըլլանք, փորերնուս մէջ պայթումի մօտ փութորիկ կայ, դուն ալ բուն մը չե՞ս զգար կոր:

— Ի՞նչ կայ որ ինչ պի... տի... ըզ... ա՛յ, տման, աս ի՞նչ է, կաթեմս թէ պուռմիչ կընեն կոր:

— Տեո՛ւր մի ես, ըզ... ըլիեր մնացիր, հէմ, կարծեօր ի՞նչ է, աղիքներնիս ապտամբեցան ըսէ՛ մէջէն ելիր:

— Իրաւ է եղբայր, ելլանք, պարտէզէն դուրս ելլանք, վաղ անցանք մենք այս ներկայացումէն:

Աւելորդ չէ իմացնել թէ, Եւրոպացիին հը-
րամցուցած շաքարը անանկ դեղով մը պատրաս-
տուած է եղեր, որ առանց ֆլաստիլու քիչ մը պո-
ռուներու փորի ցու և յաջորդաբար երկու
երեք անգամ քշուկ պիտի պատճառէր, այն ալ
կէս ժամու միջոցին, այնուհետեւ աղիքները նո-
րէն իրենց տեղը հանդարտ պիտի նստէին,

Պարտէզին վարձակալը տեսնելով որ այս
պատճառաւ թատրոնը թափուր մնաց ու ծախքն
ալ վրայ տուաւ, չափէ աւելի բարկացած՝ կը
սկսի քաղքին մէջ այս խաղին հեղինակը բնոր-
ոշել, բայց ի վեր, որովհետեւ վարպետորդին
նախապէս վարձած կառքովը գիշերանց իզմիր
իջեր ու հետեւեալ օրը մեկնելիք Լոյտի շողենա-
նաւին մէջ տեղաւորուեր էր, հրամայելով իր ի-
ջեանած պանդակի տնօրէնին որ մեկնելէն երեք
օր վերջը հետեւեալ նամակը պարտէզի ու թա-
տերաբեմի վարձակալին ձեռքը հասցնէ.

Պարոն,

«Պատիւ ունիմ իմացնել ձեզ թէ՛ ինծի ը-
րած սպառնալիքներնուդ փոխարէն՝ այս գիշեր-
ուան ներկայացումներ խանգարելու համար սոյն
միջոցին դիմեցի. Գիտցէք, պարոն, թէ թատ-
րոնի մէջ դիտակ գործածելը բնդհանրացած ու-
վորութիւն մըն է, ու եթէ կ'ուզէք որ մէկը ձեր
հոմանին չդիտէ՝ զայն վանդակի մը մէջ առնե-
լով տուններնուդ առաստաղէն կ'սկսեցէք:

Աւ այս ընդունելով մեր յարգանքները,
ուխտեցէք այսուհետեւ կատակ չընել չճանչցած
մարդերնուդ հետ:

ՃՕՐՃԻՕ

Իտալացի Դեղագործ

ՎԱՀԱՆ ՄՈՄՃԵԱՆ

Գահիրէ Ապտինի գարագօրին գէմը, Սփինքս
գեղարանին կից, և Շարա Մուհամէտ ալիաթը-
ֆէթ—էլ—Էնէպա, թիւ 1

Կը պատրաստէ ոսկիէ եւ արծաթէ զարդանկար
միանշի) եւ դրուագեալ օր'ա սննեւ:

ՎԻՊԱԹԵՐԹ

Հրատարակուեցաւ Ապրիլի թիւը:

ՄԱՆՐ—ՄՈՒՆՐ

Եկեղեցիին մէջ.

Մայրը. — Լեւոնիկ, մի՛ խօսիր, եկեղեցիին
մէջ լուռ կը կենան:

— Ուրեմն ինչո՞ւ անոնք կը պորձան կը պա-

տասխանէ փոքրիկը, դասին մէջ կեցող քահա-
նաներն ու դպիրները ցուցնելով:

— Գէորդ աղա, շատ դիտեմ կըսես, քեզի
բան մը պիտի հարցնեմ:

— Հարցուր նայինք:

— Իրիկունները ժամը քանիին արեւ մա-
րը կը մտնէ:

Գիտեստուն մտած ատենս,

Հայր և որդի գերեզմանատան մէջ կը կար-
դային գերեզմանաքարեր որոնք մեռնողներու
մասին դովետներ կը պարունակէին:

Հետաքրքիր տղան հօրը կը հարցնէ. — Ա-
ղէկ ա՛, հայրիկ, աս բոլոր աղէկները հոս թաղ-
ուած են նէ՛ գէշերը ու՞ր թաղուած են . . .

Շամշագրամ աղան տուն մը կը վարձէ, ուր
կայցելէ իր մէկ բարեկամին հետ. այս վերջի-
նը՝ տունին անմաքուր, տձեւ ու խոնաւութիւնը
տեսնելով, կըսէ. — Շամշագրամ աղա, խաթ-
րըդ չի մնայ ամա՛ մարդ խենթ ըլլալու է որ
աս տունը բնակի, երկու շաբաթ չանցած կը
մեռնի:

— Խենթ մի՛ կը պատասխանէ Շամշագրամ
տղան, ես տիկնոջս հետ պիտի ճամբորդեմ քա-
նի մը ամիս. զոքանչիս համար վարձեցի:

Երիտառարդ մը շատ մը յիմարութիւններ
գործելէ վերջ՝ կ'ամուսնանայ:

— Սիրելի փեսաս, կըսէ իրեն զոքանչը, պը-
սակին օրը կը յուսամ որ այլեւս յիմարութիւն-
ներ չպիտի ընէք:

Փեսան—Ո՛հ, ապահով եղիք սիրելի զոքանչս,
իսոք կուտամ ձեզի, ասիկա վերջին խենդութիւ-
նըս է որ կընեմ:

— Իմացա՛ր, անկուտի ժողտանը մէկ տարու-
ան մէջ 1 միլիոն ֆրանք շահեր է:

— Ուրեմն կ'սկսեմ է այդ ժողտանը:

— Ինչո՞ւ:

— Վասն զի մէկ տարուան մէջ այդչափ
դամ շահելու համար անպատճառ մեծ գողու-
թիւն մը ըրած ըլլալու է:

—Օհ, ոչինչ, կը պատասխանէ տիկինն, ե-
ղտծ փաղաքշանքէն յաղթուած, խնդրեմ, ազատ
արձակեցէք զինքը :

Յանձնարարու թիւնք կանխիկ զճարձամք: